ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԳԱՐՈՒՇ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հայ ժողովուրդը իր գոյության հազարամյակների ընթացքում խոշոր ներդրում է կատարել ոչ միայն արվեստի, գիտության, գրականության, այլ նաև բժշկագիտության մեջ։ Մեր ժողովրդի բժշկական արվեստը նրա հազարավոր տարիների ստեղծագործ մտքի ու փորձի հանրագումարն է։ Ժողովրդական բժշկության նախնական տարրերը ի հայտ են եկել դեռևս նախնադարյան համայնական հասարակության մեջ՝ պարզունակ բժշկական օգնության ձևերով։ Բնության բազմազան արհավիրքների հանդեպ հնադարյան մարդու անպաշտպան վիճակը, բնականաբար, նրան հասցրել է տարբեր բնույթի վնասվածքներ ու հիվանդություններ։ Գիտակցաբար, թե բնազդով նա ստիպված է եղել միջոցներ փնտրել այդ տառապանքներից ազատվելու, կորցրած աշխատունակությունը վերականգնելու համար։ Մարդու առաջին պրպտումներն այդ ուղղությամբ իրենց մեջ պարունակել են բժշկական մտածելակերպի սաղմեր, որոնք մարդկության զարգացման պատմությանը զուգընթաց որակ են ձեռք բերել և բժշկագիտության բազմաթիվ սկզբունքների սկզբնաղբյուր ծառայել։ Բժշկական արվեստը տարբեր ժողովուրդների մոտ տարբեր ձևով է զարգացել՝ պայմանավորված տվյալ ժողովրդի բնաշխարհի, նրա սոցիալ-տնտեսական հարաբերությունների, մշակույթի, հավատալիքների, կենցաղի ու ազգային այլևայլ հանգամանքներով։ Պետական հոգացողության բացակայության պայմաններում, հայ ժողովրդի առողջապահության միակ ապավենը դարեր շարունակ եղել է ժողովրդական ավանդական բժշկությունը։

Բժշկական գործի մշակները՝ ինքնուս բժիշկները, տիրապետելով բժշկության բազմաթիվ սկզբունքների, իրենց պրակտիկ գործունեության ընթացքում ցուցաբերել են բավարար հմտություն և գործիմացություն, որոնց վերաբերյալ պահպանվել են հարուստ փաստագրական տեղեկություններ։ Ուշագրավն այն է, որ նրանք միաժամանակ գրի են առել իրենց փորձն ու գիտելիքները, այն դարձնելով եկող սերունդների ուսումնասիրությանը նպաստող գործնական ձեռնարկ։ Ժողովրդական բժշկության վերաբերյալ տեղեկությունները չեն սահմանափակվում միայն ձեռագիր ու տպագիր բժշկարաններով, պատմական վկայություններով։ Դրանք արտացոլվել են նաև մեր ժողովրդի բանահյուսության, հավատքի, կենցաղային բազմաթիվ այլ սովորույթների մեջ։

Բժշկական մոտիվով բանահյուսական ժանրերից հետաքրքրական են ժողովրդական հեքիաթները։ Ժողովրդի իմաստությունը, մտքի սլացքը առանձնահատուկ ուժով է արտահայտվել ծանր և անբուժելի հիվանդությունների ապաքինման երազանքի մեջ։ Օրինակ՝ թագավորի որդու սրտային ծանր հիվանդության և սրտի վիրահատության մասին է պատմում Տարոնի Հարք գավառի

«Տերտրոշ հեքիաթը», որտեղ բուժողը գրեթե ժամանակակից ձևով՝ զննման, շոշափման մեթոդով ախտորոշում է հիվանդությունը և դիմում վիրահատության։ Հեքիաթում կարդում ենք. «զնշտրակ կը հանե ուր ծոցեն, ղհիվնդի սիրտ կը ճղե, ինչ օր կտրելու է՝ կը կտրե, ինչ օր թալելու է՝ կը թալե, ինչ օր կտրելու է՝ կը կարե, դեղեր կը ցանե, մհլամ կը քսե, մուխ մե կիտա քթին, հիվանդ սրսրփալով գիմնա, կըսե. «Օխեշ, ինչ անուշ քներ ենք, հորի զիսի իմցուցիք»[1]։ Այստեղ պատկերավոր ձևով արտահայտված է օպերատիվ բուժման հնարավորության միտքը, մի միջամտություն, որի մասին մարդը կարող էր մտածել միայն այն դեպքում, երբ գիտեր ընդհանուր անզգայացմամբ վիրահատելու անհրաժեշտության մասին։ Փաստորեն ներկա պարագայում երևակայական թռիչքը հասնում է դեպի մեր ժամանակների գիտական նվաճումների սահմանները։

Ժողովրդական մի այլ հեքիաթում նկարագրված է, թե ինչպես հիվանդը երկար ժամանակով տառապելով ուժեղ գլխացավերից, դիմում է բժշկին, որը կատարում է գանգի տրեպանացիա։ Այդ հեքիաթում ասված է. «ասոր գլխուն խուփը վերցնե, կաշե օր մի գէանա ճիճու կպեր է ուղեղին»[2]։ Այստեղ, հավանաբար, ժողովուրդը նկատի է ունեցել ուղեղի քաղցկեղը, որը հեռավոր անցյալներում պատկերացրել են որպես օրգանահյուսվածքների մեջ մխրճված ճանկերով ճիճու կամ խեշափառ, խեցգետին։ Չարորակ ուռուցքների խեշափառ կամ խեցգետին անվանումը ընդունված է եղել միջնադարյան հայ բժիշկների կողմից։ Ուշադրության արժանի է ուղեղի քաղցկեղի նկարագրված օպերատիվ բուժումը՝ «գլխուն խուփը» վերցնելը և կենդանու հեռացումը շիկացած մետաղյա ձողիկի օգնությամբ։ Ախտորոշելով քաղցկեղը, բժիշկը մոլորվում է. «ինչխ վերցնե ճիճուն, թե քաշե հանե, ան ա ուղեղը կը քաշե՝ մարդը մեռնի կը»[3]։ Միջամտության այդ պահին բժշկի աշակերտները հուշում են. «ճաղըմ տաքացրու, մեջքին դի՝ ճանկերը բանայ կը»[4]։ Հեքիաթի մեջ արտահայտված է ժողովրդի կենսափորձը։ Շիկացած մետաղյա ձողիկի գործածությունը վերացական հավաստիացում չէ։ Անցյալներում ժողովրդական բժշկությունը հաճախ է գործածել շիկացած մետաղը վիրահատական այս կամ այն միջամտության ժամանակ։ Հեքիաթի միջոցով յուրաքանչյուր նոր սերնդի հաղորդվել է անցյալի փորձը։ Փորձի հաղորդման նույն ձևն է բովանդակում նաև մի այլ հեքիաթ։ Ըստ այդմ թագավորը ծանր հիվանդանում է, նրա ամբողջ մարմինը պատվում է խոցերով։ Հրավիրվում են ամենաճանաչված բժիշկները, որոնցից մեկը հրամայում է երկու հավ փետրել և թարմ-թարմ դնել խոցերի վրա[5]։ Սա վկայում է, որ ժողովուրդը դեռևս հեռավոր անցյալում օգտագործել է օրգանաթերապիայի տարրեր։

Ժողովրդի բժշկական հնամենի մտածելակերպն իր բազմազան արտահայտություններով արձագանք է գտել ավանդությունների մեջ։ Փավստոս Բուզանդից մեզ է հասել անապատականների վերաբերյալ հետևյալ զրույցը. Շատիրա անվամբ հայտնի մի անապատական է եղել, որը բնակվել է առ-

---

1 «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. X, Երևան, 1967, էջ 299։

2 Հմմտ. Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 360, «Զավախքի բուրմունք», Թիֆլիս, 1892, էջ 51։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

5 «Армянские народные сказки», Ереван, 1969, стр. 63.

յուծների մեջ։ Զրույցում պատմվում է, որ երբ գազանների որևէ տեղը ցավում էր, գալիս էին նշաններով հասկացնում Շատիրային և բուժում խընդրում։ Մի անգամ առյուծի թաթը եղեգ է խրվում, Շատիրան եղեգը հանում է, թքում վերքի վրա և գլխի թաշկինակով կապում է առյուծի թաթը[6]։ Անապատականների և գազանների մտերմությունը, մարդու կողմից գազանին բժշկելը, տարածված մոտիվ է եղել բանահյուսության մեջ։ Չնայած զրույցի առասպելական բնույթին, այն, այդուհանդերձ, իր մեջ բովանդակում է մի շարք հետաքրքիր մտքեր՝ վերքից օտար մարմնի հեռացումը, վերքի վրա թքելը, գլխաշորով վիրակապելը և այլն։

Թքի բուժիչ ազդեցությունը հայտնի է գիտական բժշկությանը։ Դեռևս 1924 թ. Ֆլեմինգը հայտնաբերել է լիզոցիմ ֆերմենտը, որը գտնվում է թքի և օրգան—հյուսվածքների մեջ, իսկ լիզոցիմը օժտված է մանրէասպան հատկությամբ։ Դրանով է բացատրվում վերքերը լիզելու միջոցով ինքնաբուժմամբ լավացնելու շների բնազդը։ Բանահյուսության մեջ դրա լավագույն օրինակը «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելն է, որտեղ շան կերպարանքով արալեզները գիշերները երկնքից իջնում են ռազմադաշտ, մարտում ընկած վիրավորների վերքերը լիզելով առողջացնում են և զոհվածներին հարություն տալիս[7]։ Գերբնական ուժերի միջամտությամբ զինվորների առողջացումն ու վերակենդանացումը ժողովրդի խոր երևակայության ապացույցն են, որը փաստորեն իրականություն է դարձել մեր օրերում (նկատի ունենք վերակենդանացման ժամանակակից ծառայությունը)։

Հին Հայաստանում բավական զարգացած բանջարաբուծության, բուսահավաքչության զբաղմունքը հնարավորություն է ընձեռել նորանոր դեղաբույսերի հայտնաբերմանը և ժողովրդական բժշկության դեղացուցակի հարստացմանը, որ դարձյալ արտացոլվել է բանահյուսության մեջ։ Այսպես, օրինակ, Կարնո հայության մեջ տարածված հեքիաթներից մեկում պատմվում է, որ ջրի կենդանիները թագավորին տալիս են ինչ-որ նյութ, որը պետք է հոնցվեր հացի հետ և թագավորը, ուտելով այդ հացը, իմաստություն ձեռք բերեր։ Թագավորի համար թխված «բուլուճը» այրվում է, և հացթուխը այն տալիս է մի աղքատի։ Վերջինս ուտելով այդ «բուլուճը» ձեռք է բերում բույսերի «լեզուն» հասկանալու ընդունակություն։ Ահա այդ դրվագը. նա «կաշե օր ծառները, խոտերը, ծաղիկները բիտտուն խոսին կը. ամենքը կըսեն թե ես այս ցավի դեղն եմ, ես այն ցավի մահլամն եմ։ Ծո, աս լավ էղավ, կըսե կը աղքատը. հեքիմութենեն ա լավ բան, ինչի՞ հեքիմութեն չեմ էնե՞ օր»[8]։

Հետաքրքիր ավանդազրույց գոյություն ունի լոշտակ դեղաբույսի վերաբերյալ, ըստ որի լոշտակը մի փոքր տղա է եղել և իր վարդապետի կողմից սաստիկ տանջվել։ Վերջինիս քնած ժամանակ նա այրում է վարդապետի մորուքը և արժանանում «Գետինը մտնես» անեծքին։ Լոշտակն իսկույն գետինն է մտնում, վարդապետը զղջալով ավելացնում է՝ «ամենայն հիվանդության դեղ լինես», սակայն, այրվածքի ցավը զգալով, վարդապետը կրկին անիծում է՝ «որ ով նրան հանի՝ ինքը մտնի տեղը»[9]։ Այդ օրվանից բույսը

---

6 Փ. Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1947, էջ 26։

7 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1940, էջ 32, Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Երևան, 1970, էջ 78։

8 Ե. Լալայան, Ջավախքի բուրմունք, Թիֆլիս, 1892, էջ 49։

9 Ե. Լալայան, Բորլալուի գավառ («Ազգագրական հանդես», հ. X, Թիֆլիս)։

կոչվում է լոշտակ, որը, հայտնի է, օժտված է բազմաթիվ հիվանդություններ բուժելու հատկությամբ։ Ըստ առասպելի՝ լոշտակի մարդակերպ արմատը հողից հանելիս, իբր, մի այնպիսի ճիչ է լսվում, որ պեղողն իսկույն մահանում է։ Դրա համար արմատը հանելու դերը պատկանել է շանը։ Շուրջը փորած արմատից թոկ էին կապում և ծայրն ամրացնում շան վզին։ Վերջինս արմատը հողից պոկելիս զոհվում էր, որից հետո միայն մարդիկ արմատը օգտագործում էին բուժման նպատակներով։ Գ. Սրվանձտյանի վկայությամբ, լոշտակի արմատը հանելու համար նույնիսկ հատուկ աղոթք է գոյություն ունեցել[10]։

Դեղագործ Հ. Սեպետչյանի մի գրառման համաձայն «կանայք թարմ արմատը մի քանի րոպե զգուշորեն քսում են իրենց դեմքին՝ երիտասարդ տեսք ստանալու համար, համոզված լինելով, որ նորաբույս արմատը լոշտակի «միսն» է, որը, իբր, կնոջ դեմքը թարմացնում է։ Ավանդության համաձայն՝ «արմատի հյութը հանելը կամ լոշտակի արցունքը խլելը» համարվել է «դժվարին» գործ[11]։ Հետազոտողը այնուհետև վկայում է ավանդության այլևայլ մանրամասներ։ Բժշկությանը հայտնի է, որ լոշտակի արմատը թունավոր է, դրա համար էլ գործածությունը հատուկ զգուշություն է պահանջում։ Այստեղից էլ՝ արմատը հանելու հետ կապված վտանգավորության գաղափարը։ Լոշտակի քիմիական կազմը տակավին անբավարար է ուսումնասիրված։ Հայտնի է միայն, որ արմատը պարունակում է մի քանի գլյուկոզիդներ, ինչպես նաև օսլա, դաբաղանյութեր, խեժեր, միզանյութ, խնձորաթթվի աղեր և այլ նյութեր[12]։ Ժամանակակից բժշկության մեջ այն օգտագործվում է սահմանափակ ցուցումներով։

Հին ավանդություն կա նաև ծիծեռնախոտի մասին։ Ամիրդովլաթ Ամասիացին գրում է. «Յորժամ՝ ծիծեռնակին, որ աչուին կու ցավի, նա կուերթայ խոտն կու բերե, եւ զաչուին ի յայն խոտն կու քսէ, եւ աչուին կու աղեկնայ, եւ բժշկապետքն յորժամ զայս տեսան եւ փորձեցին, որ այս խոտս աչից դեղերուն է, եւ քան զայս լավ իրք չկայ աչից, ի գրեանք գրեցին, եւ այն ժամանակեն ի վեր այս դեղս ի բան կումտնէ, և այս դեղիս ծիծեռնակի խոտ ասեն»[13]։ Ժամանակակից դեղագիտության տվյալներով, ծիծեռնախոտի քիմնահյութը պարունակում է մի շարք ալկալոիդներ՝ ասկարբինաթթու, եթերային յուղ, վիտամին, սահոնին, ֆիտոնցիդ և 40% ճարպայուղ[14]։ Հավանաբար, ծիծեռնախոտի հարուստ բաղադրությամբ է պայմանավորված նրա հակաբորբոքիչ ազդեցությունը, որը օգտագործվել է աչքի բորբոքային հիվանդությունների, հավկուրության բուժման ժողովրդական պրակտիկայում։

Ղ. Ալիշանի «Հայբուսակ»-ում սխտորի հականեխիչ հատկության վերաբերյալ վկայակոչված է հունական մի ուշագրավ ավանդություն, ըստ որի պատերազմի դաշտի այն մասում, ուր վայրի սխտոր է աճել, դիակները չեն

---

10 Գ. Սրվանձտյանց, Գրոց ու բրոց, Կ. Պոլիս, 1876, էջ 33։

11 Հ. Հ. Սեպետչյան, Հայաստանում ժողովրդի մեջ գործածվող դեղաբույսերը («Лекарственные растения Армении и их лечебные препараты»), т. I, Ереван, 1949, стр. 79.

12 В. П. Махлаюк, Лекарственные растения в народной медицине, Саратов, 1964, 292—293.

13 Ամիրդովլաթ Ամասիացի, Անգիտաց անպէտ, Վիեննա, 1926, էջ 5։

14 В. П. Махлаюк, նշվ. աշխ., էջ 421։

նեխվել[15]։ Հավանաբար հայերին ևս հայտնի է եղել ոչ միայն սխտորի այդ, այլ նաև հիվանդությունների կանխարգելիչ, բուժիչ բոլոր հատկությունները, թերևս դրանով էլ պետք է բացատրել գրպաններում սխտոր պահելու սովորությունը։ Այդ երևույթը այսօր մեկնաբանվում է սխտորի մեջ մեծ քանակությամբ բուսական անտիբիոտիկ-ֆիտոնցիդի պարունակությամբ։

Գործնական բժշկական իմաստ են ձեռք բերում նաև հնագույն հավատքի հետ առնչվող մի շարք ազգային սովորույթներ և արարողություններ։ Ըստ հին հավատքի, հիվանդությունը մարդու մարմնի մեջ թափանցած մի երևակայական էակ է, որն ունի իր հատուկ զետեղարանները՝ լյարդը, սիրտը, գլուխը և այլն։ Այդ իսկ պատճառով հիվանդությունը բուժելու համար ժողովուրդը կիրառել է շար ոգու հեռացման տարբեր արարողություններ։ Այս մտայնությամբ է թելադրված բուժական «խրղլացավ» միջոցը, որը կիրառվել է Զանգեզուրի հայության շրջանում։ Այն առաջին անգամ գրի է առել Ա. Բակունցը։ Ազգագրագետ Ստ. Լիսիցյանը բուժման այդ եղանակը նկարագրել է հետևյալ կերպ. «Հրավիրում են զուռնա-զավալ և ստիպում են հիվանդին նրանց նվագով պարել, իրենք էլ հերթով նրա հետ էին պարում, հիվանդին թույլ չտալով պարը դադարեցնել։ Երբ հիվանդ կինը սկսում էր գանգատվել ոտքերի և ձեռքերի ցավից, գլխացավից և մրսելուց, պարը դադարեցնում էին նույն կամ մյուս օրը կրկնելու համար, մինչև որ հիվանդը շափազանց հոգնելուց հետո երկար քուն էր մտնում։ Առթնանալուց հետո նա բոլորովին առողջանում էր... Հոգնեցնելով հիվանդին՝ հոգնեցնում էին և հիվանդությունը որպես մի կենդանի էակ, որ նրա մեջ բնակվել էր, այսպիսով հեռացվում, վռնդվում էր նրանից»[16]։

Բուժման այս եղանակը բովանդակում է նյարդա-հոգեկան բնույթի մի շարք հիվանդությունների ընկճված վիճակից դուրս բերելու հնամենի փորձ։ Թեև այն կրոնական երանգավորում ունի, սակայն իր մեջ բովանդակում է երաժշտաբուժման (մյուզոթերապիայի) և հոգեբուժման հզոր գործոնը։ Հոգեհարազատ երաժշտության տակ պարը լիցքավորում է ընկճվածի ներվային համակարգը, ֆիզիկապես կայտառացնում, ստեղծում դրական հույզ, միաժամանակ, որ ամենակարևորն է, ուշադրությունը շեղում հիվանդությունից։ Ներշնչումն այս դեպքում մեծ դեր է կատարում, քանի որ հիվանդը, առանց որևէ կասկածի, հիվանդությունն ըմբռնելով իբրև իր մարմնի մեջ բույն դրած կենդանի էակ, համոզված է, որ վերջինս կհոգնի, անպայման կթողնի, կհեռանա իրենից։

Հիվանդություն առաջացնող շար ոգիների օրգանիզմից հեռացման հավատքի հետ առնչվել է ժողովրդական բժշկությանը հայտնի գանգի տրեպանացիան։ Ընկնավորության, տևական գլխացավերի և այլ հիվանդությունների պատճառը համարելով գլխի մեջ ներթափանցած վերացական կենդանի էակին, մարդիկ բուժման ելքը փնտրում էին գանգի վրա անցք բացելու և ներթափանցած էակին ճանապարհ տալու մեջ։ Պեղումների ժամանակ հայտնաբերված տրեպանացված գանգերը վերոհիշյալ ենթադրությունների խոսուն վկայություններն են։ Նման մի գանգ հայտնաբերվել է Երևանում՝

15 Ղ. Ալիշան, Հայբուսակ, Վենետիկ, 1895, էջ 265։
16 Ստ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 289—290։

Ավանի քարհանքի սոտ, 1926 թ. պեղումների ժամանակ[17]։ Գանդի արեպանացիան թեև կատարվել է նախապաշարումների նախադրյալներով, այնուամենայնիվ այն Հայաստանում նյարդավիրաբուժության սաղմնավորման արդյունք է։

Բուժական որոշակի միջոցներ կան նաև ժողովրդի կենցաղային սովորություններում, որոնք արմատավորվել են հավատքի աիրապետող ուժի ներգործությամբ։ Այսպես, օրինակ, հայ ժողովրդի կենցաղում դարեր շարունակ արմատացած էր և պահպանվում էր սեծ պասը։ Դա արաաքնապես կրոնական, բայց իրականում անաեսական և առողջապահական բնույթի միջոցառում էր։ Մեծ պասը ժողովուրդը նշել է ձմռան վերջին ամիսներին՝ յոթ շաբաթյա հատուկ սննդային ռեժիմի պահպանմամբ։ Ա՛յդ ժամանակաընթացքում ժողովրդի սննդի օրուտեսակի մեջ բացառվում էին կենդանական ծագում ունեցող մթերքները, գործածվում էին բուսական սննդանյութեր, ձեթ, ձավարեղեն և այլն։ Նախ դարնանամուտին, սննդամթերքների նվազման և անասունների մորթի արգելման պայմաններում, դա սննդամթերքները տնտեսելու յավառուն հնարավորություններից մեկն էր։ Բացի այդ, «հոգին չաղ մարմնի մեջ շտկարացնելու» մտայնությունը նույնիսկ անհրաժեշտ է որպես վեդետարյան դիետիկ առողջապահական նշանակություն ունեցող միջոցառում՝ գերսնվածության հետ կապված բաղմաթիվ հիվանդությունների կանխման համար։

Այսպիսով, հայ ժողովուրդը ոչ միայն ստեղծել է իր առօրյա բժշկությունը և հաղորդել այն սերունդներին, այլև արտացոլել է այն ժողովրդական դրական մշակումներին հատուկ բանահյուսական և ազգագրական համապատասխան ձևերի մեջ։ Ա՛յդ դա հասկանալի է, քանի որ ժողովրդական բժշկությունը հազարամյակների ընթացքում վիթխարի դեր է կատարել հասարակական կյանքում։ Այդ ինքնատիպ բժշկության հարուստ ավանդներն իրենց մեջ պտրունտկում են ներքին հիվանդությունների, վիրաբուժության, մանկաբարձության, դեղաբանության և բժշկության այլևայլ բնագավառներին վերաբերող հիրավի ուշադրավ տեղեկություններ։

НАРОДНАЯ МЕДИЦИНА В АРМЯНСКОМ ФОЛЬКЛОРЕ И МИФОЛОГИИ

ГАРУШ ГАСПАРЯН

Резюме

Возникновение и развитие армянской народной медицины нашло отражение в фольклоре и мифологии народа.

Исследование данных армянской мифологии и сказок выявляет не только архаичные формы лечения, но и предвидение современных достижений медицины в народной фантазии. С позиций современной медицинской науки можно раскрыть и прокомментировать рациональное зерно народной медицины, содержащееся в мифологии и фольклоре.

---

[17] Л. А. Огзнесов, История медицины в Армении от древнейших времен до конца XVIII столетия, Ереван, 1927, стр. 50.